ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2026թ. թիվ 632-Ա

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԵԿՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին հավելվածի 7-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի 9-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ արտաքին գործերի նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 2026 թվականի օգոստոսի 10-ի № 1105/40852-26 գրությունը, ՉԺՀ-ի Շանսի նահանգի Թայյուանի էներգետիկայի ցածր ածխածնային զարգացման համաժողովի կազմակերպչական կոմիտեի հրավերը և հաշվի առնելով գործուղման զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մերի Դալլաքյանին 2026թ. սեպտեմբերի 3-ից 7-ը ներառյալ թույլատրել մասնակցելու ՉԺՀ-ի Շանսի նահանգի Թայյուան քաղաքում կայանալիք «Կրկնակի ածխածնային նպատակների միջոցով էներգետիկ անցման առաջնորդում, նորարարությունների միջոցով կանաչ ապագայի արագացում» խորագրով համաժողովին:

2. Մ. Դալլաքյանի՝ գործուղման հետ կապված ծախսերի հատուցումը կատարվելու է հրավիրող կողմի միջոցների հաշվին, բացառությամբ գործուղման մեկ օրվա գիշերակացի և օրապահիկի ծախսերի, որոնք կատարվելու են ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի 2026 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Մ.Դալլաքյանի գործուղման ընթացքում փոխարինող նշանակել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին:

4. Մ.Դալլաքյանին՝ վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում այցի արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնել Լոռու մարզպետին և ՀՀ արտաքին գործերի նախարարությունն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-08-14 17:45:09 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. օգոստոսի 14
ք.Վանաձոր